



ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱԾԻՐԱԿԱՆ. — ՊԱՏՄԱԿԱՆ.
ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843—1896 ՀԱՏՈՐ ԾԴ ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՓԱԽՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴ

ԿԱՄ

ՍԿԶԲՆԱԽՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

(Շարունակութիւն. տես յէջ 342)

ԱՌԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ տունէն զատ
կայր նաեւ ուրիշ նշանաւոր քա-
նանայական ցեղ մի, նախանձորդ ա-
ռաջնոյն, Աղբիւսնոս եպիսկոպոսին տա-
ւա՛նք. սա տակաւին արտաքոյ կարգի բարձր
դիրք մի կը վայելէր: Ս. Գրիգոր՝ հեթանոս
քրմաց որդիքը ժողովելով՝ եկեղեցական կղե-
րանոց՝ մի հիմնեց, որուն աւելի կարողա-
ղոյն անդամներն եպիսկոպոսական ձեռնա-
դրութիւն կ'ընդունէին: Ազաթանպեղոս սոյն
եպիսկոպոսներէն տասներկու հաւ կը հա-

շուէ, և ապա կը յաւելու. « Այսք որ յորդ-
ւոցն քրմաց ընտրեցան եպիսկոպոսք կող-
մանց կողմանց, աճեցուցանել զքարոզու-
թիւնս »: Այս քորմերու որդւոց մէջ՝ առա-
ջին տեղը կը յիշատակուի Աղբիւսնոս, « որ
ապա կողմանցն եփրատական գետոյն լինէր
վերակացու »: Նա իսկ և իսկ շատ բարձր

1. Ազաթ. ձեռ. էջ 630. հրատ. Վենետիկ, 1862.
Յունարենին մէջ կը պակսին երկու վերջիններն, Տե-
րիկէս և Կիւրակոս:

գիրք կը ստանայ. Ս. Գրիգոր զինքը արքունի դրան վերակացու կը կարգէ, իբր « այլ ճշմարիտ և աստուածասէր » . ուստի արքունի եպիսկոպոս կը լինի նա : Գէպ թ Յունաստան ճանապարհորդելու միջոց՝ թագաւորն ամենէն աւելի ազնուական իշխանները կ'առնու հետը աշխարհականներէն, իսկ եկեղեցականներէն՝ մեծ արքեպիսկոպոսը Գրիգոր, նորա Արիստակէս որդին և Աղբիանոս եպիսկոպոսը՝ Ապագային մէջ ևս՝ Աղբիանոս եպիսկոպոսն նոյն բարձր գիրքը կը զրաւէ : Խոսքով Կոտակի ժամանակ (317—326), Մանաւազեանց և Որդունեաց քաղաքական պատերազմին միջոց, « մեծ եպիսկոպոսն » Աղբիանոս¹ կ'ուղարկուի իբր հաշտեցուցիչ, թէպէտև առանց արդեանց մնաց իրեն միջնորդութիւնն : Յետ աղետալի արկածին, կը ստանայ նա՝ իբր հասցի իւր եպիսկոպոսութեան՝ Մանաւազակերտ քաղաքը և զղեկակը, որ երբեմն Մանաւազեանց զխաւոր բնակավայրն էր, հանդերձ նորա պատկանող՝ Էփրատայ շրջակայ գիւղերով և սահմաններով : Նա այնուհետև եպիսկոպոսապետին կամ կաթողիկոսին արեւելեան զրացին զարձաւ : Շատ հետաքրքրական և զիտողութեան արժանի է, թէ ինչ կերպով Աղբիանոսի ցեղն կամ օտարը կրցան զրաւել կաթողիկոսական աթոռը, երբ Հռոմաւորդի ցեղն արժանաւոր յաջորդներ չէր կարող հասցունել, ինչպէս պատահեցաւ Յուսկան մահուանէն յետոյ² : Ապա յայնմ ժամանակի միաբան խորհեցան աշխարհօրէն խորհուրդ, եթէ ո՛ւր պարտ իցէ (զհայրապետութեանն³) : զկաթողիկոսութիւն ունել : Ապա իբրև ոչ ոք զոյր ի տանէն Գրիգորի այնմ արժանի, ապա նմանեցուցին⁴ զՇահակ ոմն անուն ի

տոհմէ զաւակին Աղբիանոս եպիսկոպոսին¹ : Նոյն բանը պատահեցաւ նաև յետ մահուան Ներսիսի, և այն գիպուածին մէջ՝ Թագաւորն առանց վարանելու կաթողիկոս դրաւ Յուսկան եպիսկոպոսը, « որ էր ի զաւակէն Աղբիանոս եպիսկոպոսին Մանազկերտոյ » : Սա կերպով յաջորդաբար ուրիշ երկու անձինք ևս նոյն ցեղէն ընդունեցան եկեղեցական ամենաբարձր աստիճանը : Պատմիչն, որ կը ներկայացնէ մեզի սատակի եկեղեցական կուսակցութեան ձևումը կամ հոգին, բնաւ նպաստաւոր կերպով դատաստան չի ընէր այս անձանց նկատմամբ. բայց սակայն պէտք է ընդունիլ, թէ նոքա զրեթէ միշտ բարեպաշտ և ճշմարիտ քահանաներ եղան : Չաւէն է միայն՝ որ բացառութիւն կը կազմէ : Սա, փոխանակ քահանայական երկայն պնդնաւորին, թոյլ տուաւ որ եկեղեցականը ըստ կամս զոյնզոյն ասղնեզործ նկարներով զարդարուած կարճ զգեստներ հագնին, որոնք մինչև ծնոցներ կը հասնէին, և ուրիշ մեծագիծ մուշտակներ : Ինքն այլ նոյնպիսի ասղնեզործ և նարոսօք ժապաւինեալ զգեստներ կը հագնէր, սամուրենի, կնգմենի և զայլենի մուշտակներ² : Կ'ենթադրեմ, թէ այդ ջաւենի մեծածա՛ր՝ բնաւ նորաձևութիւն չէր, այլ հեթանոս քրմաց հին ազգային սովորութիւն կամ տարազն էր այն, որուն թոյլտուութիւն ըրեր էին առաջին կաթողիկոսը, և որ վերջապէս վերցուեր էր Ս. Ներսիսի վերանորոգութեամբ : Չաւէն նորոգեց միայն

1. Ապաթ. Ճիճ, էջ 630. Կրատ. Վենետիկ, 1862. Յունարեւելի մէջ չի կայ Աղբիանոս :

2. Փաւստ. Գ, Գ :

3. Փաւստ. Գ, Ժ :

4. Այդ բառը պէտք է զուրա թողուլ իբր մեկնութիւն « կաթողիկոսութիւն » ջաւեն :

5. Անտարակոյս զբազորի միջակի և այդ բառը, Թերան հարկ և կարգու իւրիշոյն (յաթու) : Ինչպէս հեղինակն ուղղեր է զայն « բարձրացուցին », սակարկին յայն կարգ կամ աստիճանն :

1. Յերաւէ նախ և առաջ իբր կաթողիկոսական իշխանութեան կամ աթոռին ժողովին ներկայացուցեալ ծեր չորիպիսկոպոս Դանիէլ, որ ժողովը արդէն իշխանութիւնն աստատուած էր. և ապա, յետ նորա նախակութեան, Փաւստ. որ անդիտաւոր կերպով կաթողիկոս ձեռնադրուեցաւ : Բայց երկուքն այլ այն ազգեցութիւնը կ'ընեն, թէ աւելի տեղապահ հեղբ ևն աթոռին, քան թէ յառիպէս կաթողիկոսը : Սակայն շատ տարբորակ ճան է. որ ասորի Դանիէլն զիսկայն և առաջին քահանայն է Տարօնի մայր եկեղեցւոյն, և նմանապէս Փաւստ. իրեն կառուցած Ս. Յովնանու ամենամօտիկ մատրան (Բիւզանդ Տարգուհանդ կ'ըսէ) քահանայն էր (Փաւստ. Գ, ԺԲ, ԺԶ) : Սոցա ընտրութեան մէջ այն զիտուած է, որ իթէ Լուսաւորդի ցեղէն կարելի չէր կաթողիկոսութեան արժանի տեղինք դանել, զէթ նորա զիտաւոր եկեղեցւոյ քահանաներէն ընտրեն :

2. Փաւստ. Ե, ԽԲ :

3. Փաւստ. Զ, Բ :

հին սովորութիւնք. և նոյն իսկ « քրիստոնէականութիւն, աստուածապաշտ և արդար » Աստուծոյ պահանջները զայն: Աստուծոյ չի բացառուի փառաստի և նորա կուսակցութեան թշնամական հոգին: Սակայն Ագրիանոսի որդիքն զրեթէ մտնէն այլ ընտիր անձինքն եղան, և հակառակ Ներսիսի՝ միշտ հլուք և հպատակք թագաւորաց: Նոքա, իրենց չափազանց ներողամտութեամբ առ պետութիւնն, կը յուսային իբր ժառանգական յաջորդութեան սեփականութիւն ստանալ կաթողիկոսական գահը, որ իրենց փառաստութեան նպատակն էր: Ուստի իրենց և Գրիգորի տոմարն մէջ տեսակ մի նախանձ կամ մրցումն կայր, ինչպէս երբեմն խաբարեւոյց միջոց՝ Աբիաթար և Սաղաթի քահանայապետաց երկու ընտանեաց մէջ. միայն թէ քաղաքային հաւատարմի տունն ստիպուեցաւ տեղի տալ, թագաւորական վարկին նուազեցուն համար, և վերջին Պահլավունեաց հոգեւոր մեծ գերիշխանութեան պատահաւ:

Առաջին տունն, որ է՝ Ս. Գրիգորին, կը պարծէր՝ իբր թէ երեք մեծ պահլաւունի ցեղերէն մէկէն սերած լինէր. և այս բանին համար Ս. Ներսէս, ինչպէս նաև իւր որդին Մեծն Սահակ, Պարթև մակդիրը կը կրեն: Անակ, որ է՝ Գրիգորի հայրն, Սուրենեան ցեղին կը պատկանէր: Սակայն Գուշտիմը՝ հաստատուն փաստերով, ինչպէս կ'երևի ինձ, ժխտեց Գրիգորի և Անակայ մէջ եղած այս միութեան կապը: Բայց եթէ նա՝ Տրդատայ խոսքերուն մէջ, որ Գրիգոր անծանօթ օտարական ոմն կը կոչէ, կ'ուզէ նշմարտութիւնը տեսնել, եւ իւր կարծիքն չիմ: Վասն զի այն ժամանակ՝ այսպէս ծայրայեղ կերպով ազնուականութեամբ պարծեցող ժողովրդեան մի մէջ, ինչպէս են Հայք, բոլորովին անհասկանալի պիտի լինէր կաթողիկոսական ընտանեաց ունեցած ամենաշահաւոր դիրքն: Յետ թագաւորական տանը, նա կը կազմէր ամենէն աւելի ազնուական ցեղը, և խնամութիւն կ'ընէր Ար-

շակունեաց հետ, և մի և նոյն ժամանակ՝ միայն ամենաբարձր նախարարութեանց հետ, ինչպէս էր Մամիկոնեանց ցեղն: Կաթողիկոսին բովանդակ վարմունքն կամ զործելու եղանակն՝ վկայ է արդէն իւր բարձր դուրսութեան. տասներկու եպիսկոպոսը հայրապետանոցի մասը կը կազմէին, որոնք կաթողիկոսի պալատին մէջ կը բնակէին՝ իբր իրեն աթոռակիցը, օգնականը և խորհրդականը՝ և կաթողիկոսն թագաւորական պատիւներ կ'ընդունէր. նա ձեռնադրուելու կ'երթար ի Կեթարիա, արքունի կառաց մէջ նստած և ամենէն աւելի ազնուական իշխանաց ընկերակցութեամբ. մի և նոյն շքով և արարողութեամբ կը կատարուէր նաև նորա յուզարկաւորութեան հանդէսն՝, Ըստ փառ-

է. Արաբական մէջ առաջինն էր իւր փոխանորդն, իսկ ընդհանուր կաթողիկոսն Իսիդորոսն՝ իւր կառուէր (Փառաւ. Գ, ԺԲ): Բայց նա, կաթողիկոսի բացակայութեան ժամանակ՝ նորա զօրանքը կատարելով, ինքն իր գլխուն ոչ մէկ բան կարող չէր ընել, ի ըստ առեւտայն բանեքը միայն ինչ որ յանձնէր կամ շահակեր էր հայրն (որ է՝ կաթողիկոսն)՝ այսպէս կ'ընէ իւր (Փառաւ. Գ, ԺԲ). « Բայց եւ անողական եմ, և ոչ ինչ առանց պնդելի, որ թողն զիս հայրն, ունիմ իշխանութիւն զործել ինչ »: Կաթողիկոսին ամենէն աւելի մարմաւոր էր Սարգաւազապետն (« Գրիգորիս ») (Փառաւ. Գ, ԺԲ): Երկուքը աղագանտեցնելու հոգաբարձուներն էին, իսկ այլոց պարտաւորածք մասին փառաստու տեղեկութիւն չի տար: Կաթողիկոսարանի մէջ տասներկու եպիսկոպոսներ ընակելու սովորութիւնն պահուեցաւ յիշմարտին ժվ զարու մէջ (C. F. Neumann: Versuch einer Geschichte d. arm. LiteraturS. 257): Երկուքայպէս, մինչ այդ կ'ընէր ընդերք և կորուսէր է իւր նախկին փայլը և նոսրութիւնը, (յիշե՛ք միայն Սիւնեաց նախազանութեան և Ալուանից կաթողիկոսութեան բարձրումը, և յետ եպիսկոպոսաց փոխանակ՝ օգնականներու կամ քրիստոնեայտաց հաստատութիւնը), առկաւին իշմարտին պարտաւորական սինդն ինչը եպիսկոպոսներէ կը կազմուի:

3. Փառաւ. Գ, ԺԵ. Ե, ԽԻ: Փառաստուն նկարագրութեան նախկին, կաթողիկոսաց յուզարկաւորութեան նախնին աւելի չգիտաւորն կը լինէր քան թագաւորացն: Մեծերուն կ'ընկերէին արքունեաց ամենէն ունեի բարձրաստիճան անձինք, գլխաւորն՝, սպարապետն և մարզպետն:

* Փառաւ. Ե. Ներսիսի յուղարկաւորութիւնը մկարագրելով, կ'ըսէ. « Եւ առեւտ գմարմիմ սըրընոյմ Ներսիսի գառնոմ Աստուծոյ՝ պաշտօնեայք եկեղեցւոյմ և փառաստ եպիսկոպոս, և պաշտօնեիցմ Էրեւանի Տրդատ (Թորոս Տրդատ, ինչպէս կը գրուենք գրուած մոյմ փառաստի ք զրոց ծա գըլխոյմ մէջ երկու ամգաւ, որ մի և մոյմ ամծը կը կարծուի (իննի), և Մուշեղ սպարապետ և հայր մարզպետ »: Զգիտեմ ինչո՞ւ այստեղ հեղինակմ իբր յատուկ կամ պաշտամամ անուն կ'առնու Էրեւանի

1. Kl. Schr. III, S: 380, vgl. 383.
2. a. a. O. S. 409.

տոսի՝ կաթողիկոսին արտօնութիւնք չորս տեսակ էին. թագաւորին սէրն կամ մտերմութիւնն, նորա ընծայած շուքն և պատիւք, ամենաբարձր գիրքն և պաշտօնն, և սերտ ազգակցութեան կապն արքունի տանը հետ ի ձեռն խնամութեան¹։ Յայտնի է թէ, Գրիգոր միայն աւետարանը և հաւատքը քաբողելով ձեռք չի բերաւ այսպիսի չափազանց բարձր կացութիւն մի։ Պէտք է դիտել դարձեալ, թէ իւր ենթադրեալ հօրը մեծամեծ պատիւներ կը խոստանայ Պարսից թագաւորը, « և երկրորդ ինձ կոչեցից » և իբրեւ չայտարարեալ կու գայ նա, խոստով եւ թագաւորական պատիւներ կու տայ իրեն և կը նստուցանէ զինքը երկրորդ աթոռին վրայ²։ Ըստ գրուցին, Անակ՝ Սուրենեան ցեղէն իշխան մ'էր, և այս ցեղս յիրաւի պարսիկ արքունեաց մէջ թագաւորին երկրորդ տեղը կը զբաւէր³։ Սակայն Հայաստանի մէջ այս աստիճանն կամ կարգն առաւելապէս կարենան պահպանեց կը պատկանէր, վասն զի Սուրենեանք նախ երրորդ կարգը ընդունեցան⁴։ Բայց այդ այնչափ կարևորութիւն չունի։ Այլ արդեօք այս երկրորդ գահուն (δεύτερος θρόνος) մէջ, որ կը պատկանի Գրիգորի հօրը, չի կայ ուրիշ գրեթէ չնշուած յիշատակ մի, այն ինքն է՝ թէ իրօք Գրիգորի նախահարը ժամանակաւ թագաւորէն վերջը ամենէն աւելի բարձրագոյն գահը կամ գիրքը ունէին։ Արդ եթէ դիտենք, թէ Ինչպէս մերձակայ աշխարհաց մէջ, ի Կապա-

զովկիա և ի Պոնտոս, քրմապետն Մա՝ երկու հիմանայից մէջ ևս՝ անմիջապէս թագաւորէն վերջը ամենէն աւելի բարձրագոյն տեղը կը զբաւէր⁵։ Եւ բաց աստի՝ Հայաստանի մէջ հեթանոս քրմապետներն ընդհանրապէս արքունի կրտսեր որդւոց միջին կ'ընտրուէին⁶, չենք սխալի՝ եթէ ենթադրենք թէ Լուսաւորչի նախահարը Հայոց արքունի տանը կողմնակի գիծ մի կը կազմեն, որոնք քրմապետութեան պաշտօնը կը վարէին։ Յետագայ Հայոց համար անհանդուրժելի էր այն մտածութիւնն, թէ իրենց առաջնաւորն հեթանոս քրմութեւ սերած լինի, և կը քողարկէին այն բանը՝ իրենց մտքին աւելի յարմար զրուցիւ մի, իբրեւ արքայապետան հօրէ ծնած լինի։ Այն կարծիքն⁷ թէ Գրիգոր հին հեթանոս քրմութեւ սերած է, անստարակոյ լոկ ենթադրութիւն պիտի մնայ միշտ, սակայն շատ իրեր և խնդիրներ կը պարզէ մեզ։ Նախ և առաջ նոր լոյս մի կը սփռէ այն իրին վրայ, թէ ինչպիսի՜ չափազանց եռանդն և ազդեցութիւն ի գործ կը գնէ Ս. Գրիգոր՝ հեթանոս քրմաց անտեսական վիճակը և ապրուստը հոգալու համար։ Ոչ միայն նախկին քրմաց որդիքն են որ կը կազմեն քրիստոնեայ քահանայութիւնը⁸, այլ և մեհեանք և ամրոցք՝ իւրաքանչիւր իրենց սպա-

բառը որ պարզ է թէ կը մշտնադէմ քահանայական դասով գլխաւորը, աւագները կամ սարկաւազապետ՝ հաւանական է թէ Ս. Ներսիսի առաջին աթոռին Սուրբի (փաւստ. Դ. ԺԵ), որ մի անգամ միայն տեսարանիմ վերայ կ'երևի և այլ ևս չի յիշատակուիր, վախճանած լինի և իրեն յաջորդած սոյն Տրդատը. և այս բանը կը հաստատուի մակ թիւզման ձգտող վերջիմ գլխով խօսքերէմ։

Ե. Բ.

1. Փաւստ. Գ. Ե։

2. Ագաթ. Բ. էջ 37 և 58 (հրատ. Վենետիկ, 1862)։ « Եւ ասպէս նմա պատիւ ըստ օրինաց թագաւորէն և անէր նստուցանէր զնա յերկրորդ աթոռ թագաւորութեան »։

3. *Potestatis secundæ post regem*, Ammian. XXX, 2, 5.

4. Մովս. իօք. Բ. Ե։

1. "Εστιν δ' Ισπεδς δεύτερος κατά τιμήν ἐν Καππαδοχίᾳ μετὰ τὸν βασιλέα. Strabo XII, p. 535 C. Եւ ի Պոնտոս. Δίς τοῦ ἑτοῦς κατὰ τὰς ἐξόδους λεγομένης τῆς θεοῦ, διαδύμια φορῶν ἐτιγχανον δ' Ισπεδς, καὶ ἦν δεύτερος κατὰ τιμήν μετὰ τὸν βασιλέα. Ի Տիւրքոս. *Sacerdos Hercules qui honos secundus a rege erat*, Justin. XVIII, 4, 5.

2. Երեսուէր Թագաւորին եղբայրն՝ Երուսալ. Բագաւորին քրմապետն էր (Մովս. իօք. Բ. Ե)։ Իւր յաջորդն Էփսէօն (φίλος τοῦ βασιλέως) էր Արտաշէս Թագաւորն (Անդ. Բ. ԽԷ). վերջը նոյն Թագաւորն Անդ մէջ (գիծն Սրամազայ) քրմապետ կը գնէ իւր տան որդին (Անդ. Բ. ԾԳ)։

3. Մի և նոյն հանգամանքները կը տեսնենք նաև Իրաւոյայէ մէջ, ինչպէս կը վկայէ Windisch. « Իրաւոյայէ մէջ այլ ոչինչան շուտով պիտի չի ծագէր քրիստոնեայութիւնն, եթէ ի նպաստ իրեն չի գլուծւային այն հոգեւոր ոյժերն որք կային արդէն քրիստոնեայ և զնստուրաց հին զաստիպարէն մէջ։ Այս կարծիքս յուսուի արտայայտուած է, ինչպէս կը հարգենք նաև O' Cury-ի հաւանութն մէջ. On the Manners and Customs of the Ancient Irish, ed. Sullivan II, p. 72. Շատ բարայայտ է այն զատմութիւնը՝ զոր կը կորչաւք Book of Armagh-ի մէջ (ի սկիզբն Թ. դարու) Ս. Պատրիկի խոսի և Դըքթալ բանաստեղծի մասին։ Ս. Պատրիկ՝ Լէնտալը զատուի համար եղիկեղոյսի

սաւորորք և յաճախ լայնածաւալ գիւղիւք և ագարակօք՝ կանոնաւոր կերպով եկեղեցական կալուածներուն կարգը մը մտնեն, թաղաւորաց առատաձեւութեամբ հետզհետէ կ'առաւելուին այն կալուածներն. ամբողջ նախարարութիւնք կամ նահանգք, գեօղք և ագարակք պարզեւ կը տրուէին եպիսկոպոսաց՝ Այլ ոչ որ՝ այնքան ճոխ և առատ նուէրներ ստացաւ, ինչպէս կաթողիկոսն ինքնին։ Անգամ մի Ներսէս պաշտօնական այցելութիւն կ'ընէ իւր կալուածոց կամ ձեռակաճ իշխաւնորքեանց մէջ՝ Տասն և հինգ դաւառ կամ վիճակք կը պատկանէին իւր իշխանութեամբ, որոց մէջ գլխաւորներն էին. Արարատ, Դաւրանադի, Եկեղեցաց, Տարուն, Բզունիք և Դոփք։ Սոյն կալուածներէն ոմանց տեղը կրնանք նաև ճշգիւ նշանակել. Դարտնադեաց մէջ Կաթողիկոսի ստացուածն էր Թորգան գիւղը, որ հայրապետաց գերեզմանատեղին էր, և Բարդիմիթա դից մեհնարան. Եկեղեցաց մէջ՝ կաթողիկոսին կը պատկանէր Թիւ աւանքը՝

աւանքը՝, ուր էր երբեմն Նանեակոն դից մեհնարանը. Արարատայ մէջ՝ կալուած մ'ուանէր Արտաշատ, ուր կործանուած էին Անահայ բազմաքաներն և Տիւր դից մեհնարանը։ Գլխաւոր կալուածն, Աշտիշատի մէջ վահագնի հին մեհնարանն, ծածօթ է արդէն։ Ինչպէս կը տեսնուի, նախկին հեթանոս մեհնարանից քանդուելով՝ Ս. Գրիգոր ձեռնուանայն չի մնաց. որովհետեւ նոցա պատկանող ընչից և ստացուածոց մեծագոյն մասն աւատարկոյ կաթողիկոսական կալուածոց մէջ մտաւ։ Սոյն կալուածոց մէջ ամենէն աւելի նշանաւորն էր Աշտիշատ, իբր բնիկ նիստ կամ կայեան հայրապետական տանը։ Հայր մարգարէի այցելութեան առթիւ պատմագիրն մեծ ախորժով և հաճութեամբ կը նկարագրէ այն շքեղ դաստակերտը (Փաւստ. Դ, ԺԳ)։ Ս. Ներսէս կը պատուիրէ շքեղ ճաշ մի պատրաստել ի պատիւ ազնուատոմար այցելուին. նոյն պահուն Հայր մարգարէն « եւ լանէր յեպիսկոպոսական կայանէն յապարանիցն մինչև ի վայարաւնս սրբոցն (Յովհաննոս և Ամանազինեայ) ։ Ի մեծ և ի գեղեցիկ հրապարակին երթեկեկ տուալ չըլլէր՝ զճեմն տուալ։ Ապա տեսներ զգեղեցիկութիւն վայրացն, զնիստ շքեղութեան ի բարձրաւանդակ տեղեացն և զնայեացն ի խոնարհ, զի կարի վայելուչ էր տեղին... Զիւրդ, ասէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ

մի պէտք կ'ունենայ և կը խնայէ Դրբժաւ բանաւորներն՝ որ յարմար անձ մի գտնէ իրեն. աս կը ներկայացնէ իւր մէջ աշակերտը, զոր իսկոյն կը մկրտեն »։ Հմմտ. Stokes, Goidelica 2. pp. 86 u. 91 ; Hogan, Documenta de St. Patrio p. 104 sqq. ».

4. Ինչպէս տեսանք յառաջ (էջ 454), Արքեանոս եպիսկոպոսը իրեն կալուածք ստացաւ Մանանազեանց գաւառը. այսպէս նաև Բասանոս եպիսկոպոսն նուէր ընդունեցաւ ըրորը Որդունեաց երկիրը՝ նանդեք իրենց Որդորոց յաղաքով (Փաւստ. Գ, Դ)։ Փառնէ կաթողիկոսին որդին՝ Յովհան եպիսկոպոսն՝ անվայել խեղկատակութիւններ կ'ընէր Թագաւորաց առջև, որպէս զի կալուածներն և ագարակներ ստանար (Փաւստ. Դ, Ժ)։ Ըստ կանոնաց Ս. Սահակայ, Ս. Գրիգոր քահանայից պարենի համար տուէր էր իրենց եկեղեցեաց պատկաւնող ոչխարաց և ուրիշ անասնոց մէկ մասը, ինչպէս նաև ցորենի և զինուոյ տասանորդը։ Տրուած պատկաւրոց որ ամենայն եկեղեցիք իրենց պատկաւր ճամբար յորս ագարակ (հող) և քաղաքաց մէջ եօթը տուն (Եփայ հող) ունենան (Աղաթ. ՃԺԺ. էջ 624) Յոյն երկու անգամն ալ քննարկեց (Գրգ. Գրգ. Կ'աթ. § 159. « εταθεν τεσσαραξ αρουρας εν τοις χωρισις, εν δε ταϊς χωμοπολεσις επτα αρουρας εις υπηρησταν του ιερως »)։ Փաստաւ ևս եօթն ագարակ կամ հող կ'ընէ (Ե, ԱԱ)։ Բագրեւանդայ եպիսկոպոսանիւտ և Կեղեցեայ երկրներ կը յիշէ Փաւստոսն (Դ, ԺԳ), որոնք անասնորկոյս ի սկզբան Բագրեւանք Ամանո գիւղ մեկնին ստացուածներն էին։ Հմմտ. Բժէս "Αρτεμις Περιοδ-ի (որ է Πέρση, Περγα. Գերեզ կիտրացի, էջ 150, և Դանթութիւնն Հոգմանի էջ 247) յանցս Եփայտի, Փլուտ. Լուկուլլ. Ինչ խաղ եպիսկոպոսն արքեանական ձեռքէն և սուրհանձն տնտեսներ նուէր ստացաւ Թագաւորէն (Փաւստ. Դ, ԺԲ)։

1. « Ի Թիւն աւանի, ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ »։ Փաւստ. Գ, Բ։
2. Ս. Ներսէս հայրապետի Ամբ գիւղն ալ (Փաւստ. Զ, Զ), — որու մասին ինքնիշխան Ալեքսանդր-Ռիֆն հիշ շայտարարէ զբոսորդն մէջ յիշատակութեան արժանի բան չի գտներ, — Թուի Արարատի մէջ լինել։ Այսպէս նաև կաթողիկոսին ստացուածոց մէջ « գաւառական իւր ընտանեակ »։ Արարատեան գաւառին ի վաղարշապատ քաղաքն » (Աղաթ. ՃԺ)։

* Այս բանս, որ կը գրուի մաս ըստ-դասով, ցարդ բաժանաբերութեմ շատք յատուկ ամուս կը կարծիքն, և կը հասկնային Ս. Գրիգոր Լուսավորչի պատկաւմող կալուածներն կամ դաստակերտներն միոյն ամուսը, զերջին ժամանակներս ուսուցչապետն Ն. Մաւ զբոցը հաստատապէս թէ յատուկ ամուս չէր այն, այլ երկու պարսիկ քաղաքու բարդութիւն մի (Բագր. և Գրգ.), որ կը մշտնապէս արագ-արագ շարժուէր։ Արդեն տարիներ յառաջ՝ Մեծ Հ. Գ. Վ. Անիլեան գրիթէ մոյն կարծիքը յայտնուէր իւր մը. շանաւոր Արարատ իրկատիրութեամբ մէջ (Արարատ, Վիճիւտ. 1890, էջ 204)։

մարդկան տուեալ է և ոչ արանց¹ »։ Սակայն Աշտիշատ, ինչպէս պիտի կարծուի թեւրեւ, եկեղեցւոյ յատուկ կալուած չէր, այլ Ս. Գրիգորի ստացուած։ Պապ և Աթանաս գինէս, որոնք ըստ ամենայնի հետևողք էին Ուրբեայ և Փեննենտի վարուց, և զինուորական կենաց տալով իրենք զիրենք՝ կ'արհամարհէին և կը ծաղրածէին սրբազան իրերը և տեղերը, այնու հանգերձ կը բնակէին Տարոն գաւառին մէջ Աշտիշատի եկեղեցւոյն քով, զոր շիներ էր իրենց նախահաւն Գրիգոր²։ Նոքա եպիսկոպոսանոցի (ἐπισκοποιον) մէջ կը բնակէին, և բոլորովին անառակ և անկրօն կեանք մի կը վարէին, վարձկաններով, զուսաններով, խեղկատակներով և ուրիշ ամէն տեսակ անառակութեամբք պղծելով սրբազան տեղերը։ Սակայն նոքա մինչև իրենց մահը այն տեղ մնացին՝ առանց վրդովուելու մէկէն, որովհետև իրենց սեփական կալուածին մէջ կը գտնուէին³։ Նոյն իսկ Գրիգորի տանը վերջին կաթողիկոսն՝ Ս. Սահակ, արու ժառանգներ չսնենալով, բոլոր իրեն կալուածները, տգարակները և զիւղերը, իւր յաջորդաց չի կտակեր, այլ իրեն զստեր որդւոց՝ որ էին Սամիկոնեանք։ Եւ այսպէս

Աշտիշատ գիւղն¹, նախկին եկեղեցական ամրոցն, աշխարհիկ մարդկանց ձեռքը կ'անցնի։ Արդ, եթէ Արաիշատի կալուածը, ինչպէս պարզ կը հետևի, ոչ եթէ եկեղեցական աստիճանին կամ իշխանութեան պատճառաւ կը պատկանէր Ս. Գրիգորի տանը, այլ իբր բնական ժառանգական իրաւունք, ապա ուրեմն յայտ է թէ Ս. Գրիգորի նախահարըն տեարք էին Աշտիշատի՝ նոյն իսկ Հայաստանի զարձէն առաջ. որ ըսել է՝ թէ Լուսաւորիչն Տարոնի հին եկեղեցական իշխանաց տանը սերունդն էր։

Ստուգիւ նշանաւոր անձնաւորութիւն մի, որպիսի որ էր Ս. Ներսէս, հայկական եկեղեցւոյ այս հնաւանդ և տարօրինակ դրութեան վերջ դրաւ։ Դիտողութեան արժանի հանգամանք մ'է՝ որ Ս. Ներսէս բոլորովին յոյն տարերաց մէջ սնաւ և զտրկացաւ, և ի Կեսարիա՝ քրիստոնէայ վարժապետաց ձեռքը կըթուեցաւ։ Ուստի յայտ է թէ, տակաւին դեռահասակ՝ իւր աշխարհին ամենահարձր եկեղեցական իշխանութիւնն ընդունելով, ջանաց Հայաստանի մէջ ևս զործադրել Ս. Բարսղի ժամանակի եկեղեցւոյն ամենաբարձր գաղափարները։

Շարայարելի

1. Փաւստ. Գ, ԺԴ։

2. Փաւստ. Գ, ԺԹ։

3. Հետևաբար նոյն ժամանակի կաթողիկոսք ՍԱԷ-

տիշատ չէին նստեր։ Աթանասգինեայ որդին՝ Ս. Ներսէս եղաւ որ դարձեալ զբաւեց ընտանեաց աթոռը։

4. ԲՅԻ ԷԷ-Լ կը կուէ Դ. Փարպեցին (ԺԸ)։

